

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----- 2022թ.

N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-12-րդ, 17-րդ, 20-րդ կետերով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի _____ -ի
N _____-Ն որոշման

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ**

1. Սույն կարգով կարգավորվում են Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված հեղուկ վառելիքի վաճառքի, սեղմված բնական գազի վաճառքի, հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի, խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու, ոգելից և ակոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման, առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու, հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման, քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման, սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվությունների (այսուհետ՝ թույլտվություն) տրամադրման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Թույլտվությունը տրամադրվում է իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ դիմումատու) Երևանի քաղաքապետի, իսկ

համապատասխան թույլտվությունը տալու լիազորությունը վարչական շրջանի ղեկավարին պատվիրակված լինելու դեպքում՝ համապատասխան վարչական շրջանի ղեկավարի կողմից՝ սույն կարգի N 1 ձևին համապատասխան:

3. Թույլտվություն ստանալու համար դիմումատուն Երևանի քաղաքապետին կամ վարչական շրջանի ղեկավարին ներկայացնում է էլեկտրոնային կամ թղթային եղանակով՝ N 2 ձևին համապատասխան դիմում, որին կից ներկայացվում են.

1) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի գրանցման քաղվածքը.

2) շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը.

3) տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը.

4) դիմումատուի Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ Երևանի վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի պատճենը.

5) օբյեկտի ճակատային մասի գունավոր լուսանկարը:

4. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է նաև՝

1) քնարկվող տարածքի լուսանկարը.

2) էսքիզային առաջարկ (միայն՝ ծաղիկների բացօթյա վաճառք իրականացնելու համար նախատեսված տակդիր տեղադրելու դեպքում):

5. Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է նաև.

1) բժշկի որակավորում ունեցող աշխատակցի աշխատանքային պայմանագրի կամ Երևան քաղաքում գործող բժշկական հաստատությունների հետ կնքված համապատասխան պայմանագրի պատճենը.

2) բժիշկ աշխատակցի անձնագրի պատճենը.

3) բժիշկ աշխատակցի բժշկական որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված 100 մետր շառավղի մեջ գտնվող հարակից գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների պարզաբանմամբ տեղեկանք:

6. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվություն ստանալու համար դիմումին կից ներկայացվում է նաև 100 մետր շառավղի մեջ գտնվող հարակից գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների պարզաբանմամբ տեղեկանք:

7. Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին տրվում է համապատասխան թույլտվություն կամ դիմումը մերժվում է:

8. Դիմումը մերժվում է, եթե՝

1) սույն կարգի 3-6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի (այդ թվում՝ տեղական տուրքի գումարը վճարվել է Երևան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս) և դրա մասին դիմումատուին տեղեկացնելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից դրանք չեն համալրվել:

2) գործունեության իրականացման վայրի շենքը կամ շինությունը չի համապատասխանում գործող օրենսդրությամբ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պահանջներին, ինչի վերաբերյալ պետական լիազոր մարմնի (մարմինների) կողմից ստացվել է համապատասխան տեղեկատվություն:

3) դիմումատուն Երևան համայնքի հանդեպ ունի չկատրված ժամկետանց պարտավորություններ, բացառությամբ, եթե դատական կարգով վիճարկում է տվյալ պարտավորության առկայությունը:

9. Դիմումը մերժելու դեպքում տեղական տուրքի վճարված գումարը վերադարձվում է օրենքով սահմանված կարգով:

10. Թույլտվությունը չի կարող դիմումատուի կողմից փոխանցվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կամ օգտագործվել այլ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:

11. Թույլտվությունն ստանալուց հետո թույլտվություն ստացած անձը պարտավոր է իր գործունեությունը կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____
N Ա- ԱՇԽ - Թ-000000**

Տրված _____ 20 թ.

Թույլատրված գործունեության անվանումը

Հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը

Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը

Թույլտվության գործողության ժամկետը _____ 20 թ-ից մինչև _____ 20 թ-ը:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Երևանի քաղաքապետ _____ ին կամ
Երևանի _____ վարչական շրջանի ղեկավար _____ ին

/անուն, ազգանունը/

ԴԻՄՈՒՄ
ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական-իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը

2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցե, կապի այլ միջոցներ

4. Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

5. Գործունեության անվանումը

6. Թույլտվության ժամկետը

/նշել թույլտվության պահանջվելիք ժամկետը/

Ներկայացված տեղեկատվությունների իսկությունը հաստատում եմ

/կազմակերպության պատասխանատու անձի անունը, հայրանունը, ազգանունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը/

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____
N Ա- ԱՇԽ - Թ-000000**

Տրված _____ 20 թ.

Թույլատրված գործունեության անվանումը

Հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը և գտնվելու վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը

Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը

Թույլտվության գործողության ժամկետը _____ 20 թ-ից մինչև _____ 20 թ-ը:

(ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Երևանի քաղաքապետ _____ ին կամ

Երևանի _____ վարչական շրջանի ղեկավար _____ ին

/անուն, ազգանունը/

ԴԻՄՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ _____
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ**

1. Իրավաբանական անձի (կազմակերպության) անվանումը և կազմակերպական-իրավական ձևը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը

2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գտնվելու վայրը

3. Գործունեության տեսակի իրականացման վայրը, շինության տեսակը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցե, կապի այլ միջոցներ

4. Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

5. Գործունեության անվանումը

6. Թույլտվության ժամկետը

/նշել թույլտվության պահանջվելիք ժամկետը/

Ներկայացված տեղեկատվությունների իսկությունը հաստատում եմ

/կազմակերպության պատասխանատու անձի անունը, հայրանունը, ազգանունը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, հայրանունը, ազգանունը/

_____ 20 թ.

Կ. Տ.

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-12-րդ, 17-րդ, 20-րդ կետերով սահմանված են տեղական տուրքի հետևյալ տեսակները՝

համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար,

օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար,

իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար,

համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար:

Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4.2-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվություն:

Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը Երևան քաղաքի տարածքում տալիս է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների գործունեության թույլտվություն:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարը վարչական շրջանի տարածքում, առևտրի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարը վարչական շրջանի տարածքում, սպասարկման գործունեության համաքաղաքային կանոններին համապատասխան, բաղնիքներին, սաունաներին, զվարճանքի օբյեկտներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական շրջանի ղեկավարը վարչական շրջանի տարածքում, հանրային սննդի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի N 390-Ն որոշման 2-րդ կետի կարգավորումների համաձայն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ կետերով սահմանված

տեղական տուրքերը գանձելու և թույլտվություններ տալու լիազորությունները պատվիրակվել է Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի համաձայն՝ ավագանին սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը, բացառությամբ տեղական տուրքերի կամ վճարների այն տեսակների, որոնց թույլտվությունների տրամադրման կարգը սահմանված է օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

Ելնելով վերը նշված իրավակարգավորումներից՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի վերը նշված ենթակետերով նախատեսված գործունեությունների թույլտվությունների տրամադրման կարգերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի եվ վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծն ընդունելու կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Նշումներ
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>1. «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին կետը չի համապատասխանում Նախագծի վերնագրին, իսկ Նախագծով հաստատվող կարգի վերնագիրը՝ Նախագծի 1-ին կետին: Այս առումով Նախագծի վերոնշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով միմյանց:</p> <p>2. Նախագծով հաստատվող կարգի (այսուհետ՝ Կարգ) 1-ին կետում նշված «սահմանվում է» բառերն առաջարկում ենք փոխարինել «կարգավորվում են»</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p> <p>Ընդունվել է, նախագծում կատարվել են</p>

		<p>բառերով, իսկ «տրամադրման կարգը» բառերը՝ «տրամադրման կարգի հետ կապված հարաբերությունները» բառերով:</p>	<p>համապատասխան փոփոխություններ</p>
		<p>3. Կարգի 1-ին կետում «բացօթյա առևտրի կազմակերպման» բառերն անհրաժեշտ է փոխարինել ««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման» բառերով, իսկ «հանրային սննդի կազմակերպման և իրականացման» բառերը՝ «հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման» բառերով՝ նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 12-րդ կետերի դրույթները:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
		<p>4. Կարգի 2-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ ներկայացված չէ կարգի N 1 ձևը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգի 3-րդ կետում նշված N 2 ձևին:</p>	<p>Չի ընդունվել, N 1 և N2 ձևերը կցված են նախագծի փաթեթին</p>
		<p>5. Կարգի 3-րդ կետում անհրաժեշտ է լրացնել նաև թույլտվություն ստանալու</p>	<p>Չի ընդունվել, քանի որ պարզ չի դիմում</p>

		<p>համար Երևանի քաղաքապետին դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթներ՝ նկատի ունենալով Կարգի 2-րդ կետի կարգավորումը:</p>	<p>ներկայացնելու ինչ դրույթների մասին է խոսքը, քանզի նախագծի հավելվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված են դիմում ներկայացնելու վերաբերյալ դրույթները</p>
		<p>6. Կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել, թե դիմումատուն ումից է ստանալու Երևան համայնքի հանդեպ պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքը:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
		<p>7. Կարգի 5-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել, թե 100 մետր շառավղի մեջ գտնվող հարակից գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների պարզաբանման տեղեկանքն ում կողմից է տրամադրվելու:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
		<p>8. Կարգի 7-րդ կետում անհրաժեշտ է լրացնել դիմումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան թույլտվությունը մերժելու վերաբերյալ դրույթներ:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
		<p>9. Կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Թույլտվություն ստանալու դիմումը մերժվում է, եթե սույն կարգի 3-րդ</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են</p>

		<p>կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են թերի: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա վարչական մարմինը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը: Հետևապես, Կարգի վերոնշյալ ենթակետի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել:</p>	<p>համապատասխան փոփոխություններ</p>
		<p>10. Կարգի 8-րդ կետի 2-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել «գործող օրենսդրությամբ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար նախատեսված պահանջներին» ձևակերպումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրությունը լայն հասկացություն է, մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ օրենսդրությունն օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ամբողջություն է:</p> <p>Նույն կետում հստակեցման կարիք ունի, թե պետական լիազոր մարմնի</p>	<p>Չի ընդունվել, քանի որ թույլտվություն ստանալուց հետո տեղական տուրք վճարողները պարտավոր են իրենց գործունեությունը կազմակերպել ինչպես օրենսդրական, այնպես էլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որը ամրագրված է</p>

		<p>(մարմինների) կողմից ինչ կարգով է ստացվելու համապատասխան տեղեկատվությունը:</p>	<p>«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով: Պետական լիազոր մարմիններից տեղեկատվությունը ստացվելու է գրավոր հաղորդման միջոցով</p>
		<p>11. Կարգի 8-րդ կետից հետո, որպես դրա շարունակություն, նախատեսված է 6-րդ կետ, որն անհրաժեշտ է նախատեսել առանձին՝ համապատասխանաբար շտկելով համարակալման հաջորդականությունը: Սույն դիտողությունը բխում է <i>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներից:</i></p> <p>Նույն կետում գործաձվում է «Հայտ» եզրույթը, մինչդեռ Կարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ թույլտվություն ստանալու համար դիմումատուն ներկայացնում է դիմում: Բացի այդ, Կարգի 8-րդ կետում նույնպես խոսք է գնում թույլտվություն ստանալու դիմումը մերժելու մասին: Հետևապես, Կարգի տեքստում անհրաժեշտ է հստակեցնել տերմինների</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

		<p>գործածությունը՝ տերմինների միասնականությունն ապահովելու նպատակով: Հիշյալ առաջարկությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:</p> <p>Նույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգի տեքստում գործածվող «Հայտատու» և «Դիմումատու», ինչպես նաև 10-րդ կետում նշված «տուրք վճարող» տերմիններին:</p>	
		<p>12. Կարգի 8-րդ կետի կապակցությամբ անհրաժեշտ է պարզաբանել՝ արդյոք դիմումը մերժելուց հետո թույլտվություն ստանալու համար հնարավոր է կրկին անգամ դիմում ներկայացնել, թե՛ ոչ, եթե այո, ապա ինչ ժամկետում: Այս առումով գտնում ենք, որ Կարգի 8-րդ կետով նախատեսված թույլտվություն ստանալու դիմումը մերժելու որոշ հիմքեր կարող են դիտարկվել որպես դիմումը հետ վերադարձնելու հիմքեր, օրինակ, եթե սահմանված փաստաթղթերը</p>	<p>Չի ընդունվել, քանի որ բարձրացված հարցերը կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով, մասնավորապես՝ 31-րդ հոդվածով</p>

		ներկայացվել են թերի, տեղական տուրքի գումարը վճարվել է Երևան համայնքի ավագանու որոշմամբ սահմանված դրույքաչափից պակաս:	
2.	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչություն	1. Նախագծին կից ներկայացված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-րդ կետում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ նաև Երևանի քաղաքապետին ներկայացվող դիմումի մասին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծի 2-րդ կետում և Հավելվածի Ձև 2-ում նշվում է Երևանի քաղաքապետին, վարչական շրջանի ղեկավարին ներկայացվող դիմումի մասին:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
		2. Հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետում «պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պետական գրանցման համարը» բառերով՝ նկատի ունենալով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի կարգավորումները:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
		3. Հավելվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում «ՀՀ կադաստրի պետական կոմիտեի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Կադաստրի կոմիտեի» բառերով՝ նկատի ունենալով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված կարգավորումները:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
		4. Հավելվածի 8-րդ կետով նշվում է, որ դիմումը մերժվում է, եթե նույն կարգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են թերի, և դիմումատուն սահմանված ժամկետում չի համարել դրանք: Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հավելվածում դիմումին կից ներկայացվող փաստաթղթերը սահմանված են ոչ միայն կարգի 3-րդ կետում, այլ նաև՝ կարգի 4-6-րդ կետերում՝ առաջարկում	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

		<p>ենք 8-րդ կետի 1-ին ենթակետում լրացնել նաև հիշյալ կետերը: Բացի այդ, Հավելվածի 8-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել թե թերի փաստաթղթերը ինչ ժամկետում պետք է ներկայացվեն: Մինչույն ժամանակ, 8-րդ կետի 1-ին ենթակետում «թերի են, իսկ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «թերի և» բառերով:</p>	
		<p>5. Հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել թե ում կողմից և ինչ կարգով ներկայացվող տեղեկատվության մասին է խոսքը:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ թույլտվություն ստանալուց հետո տեղական տուրք վճարողները պարտավոր են իրենց գործունեությունը կազմակերպել ինչպես օրենսդրական, այնպես էլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որը ամրագրված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ տեղեկատվությունը կարող է ստացվել ցանկացած իրավասու պետական մարմնից</p>

			<p>(տեսչական մարմիններ, նախարարություններ և այլ գերատեսչություններ)</p>
		<p>6. Հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսվում է, որ դիմումը մերժվում է, եթե տեղական տուրքի գումարը վճարվել է սահմանված դրույքաչափից պակաս: Այս առումով նկատի ունենալով Հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում ամրագրված կարգավորումները՝ առաջարկում ենք սահմանված չափից քիչ տուրքը վճարած լինելու հանգամանքը դիտարկել ոչ թե դիմումը մերժելու, այլ՝ վերադարձնելու հիմք:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ դիմումը չբավարարելը՝ մերժելը, ևս հանդիսանում է դիմումի վերադարձ և տնտեսվարող սուբյեկտը սահմանված դրույքաչափին համապատասխան վճարումը կատարելուց հետո կարող է ներկայացնել նոր ի լրումն դիմում</p>
		<p>7. Հավելվածի 11-րդ կետում «Թույլտվությունն ստանալուց հետո տեղական տուրք վճարողը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Թույլտվություն ստացած անձը» բառերով:</p>	<p>Չի ընդունվել, նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը</p>
		<p>8. Նախագծին կից ներկայացված Ձև 1-ը և Ձև 2-ը անհրաժեշտ է ներառել հավելվածում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք հավելվածի մաս են:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>

		<p>9. Նախագծին կից ներկայացված հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում անհրաժեշտ է հստակեցնել, թե որ պահից սկսված է հաշվվելու թերի փաստաթղթերը 2 աշխատանքային օրվա ընթացքում համալրելու պահանջը:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
		<p>10. Նախագծին կից ներկայացված հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսվում է, որ դիմումը մերժվում է, եթե տեղական տուրքի գումարը վճարվել է սահմանված դրույքաչափից պակաս: Այս առումով նկատի ունենալով այն հանգամանքը, որ նույն հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետով տեղական տուրքի վճարման անդորրագրի պատճենը չներկայացնելու պարագայում անձին հնարավորություն է տրվելու սահմանված ժամկետում համալրելու փաստաթղթերը և ներկայացնելու պահանջվող անդորրագրի պատճենը՝ առաջարկում ենք նման հնարավորություն (դիմումը վերադարձնելու և սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը համալրելու) նախատեսել նաև սահմանված չափից պակաս վճարված անդորրագիր ներկայացնելու պարագայում: Մինչույն ժամանակ, անդրադառնալով ամփոփաթերթում ներկայացված դիտարկմանը, հարկ է նկատել, որ դիմումը չբավարարելը՝ մերժելը, չի հանդիսանում դիմումի վերադարձ, դիմումի մերժման դեպքում տնտեսվարող սուբյեկտը ներկայացնելու է նոր դիմում՝ դրան կից բոլոր փաստաթղթերով, այդ թվում նաև՝ պահանջվող տեղեկանքները և քաղվածքները:</p>	<p>Ընդունվել է մասամբ, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>
		<p>11. Նախագծին կից ներկայացված հավելվածի 11-րդ կետում «Թույլտվությունն ստանալուց հետո տեղական տուրք</p>	

	<p>վճարողը» բառերն առաջարկում ենք փոխարինել «Թույլտվություն ստացած անձը» բառերով: Այս առումով անդրադառնալով ամփոփաթերթում նշված դիտարկմանը, հարկ է նկատի ունենալ, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառվում է «տեղական տուրք վճարող» եզրույթը, քանի որ հիշյալ օրենքում օգտագործվող հասկացությունների շարքում նախատեսված է «տեղական տուրք վճարող» եզրույթը, ըստ որի՝ նույն օրենքի իմաստով տեղական տուրք և (կամ) վճար վճարողը՝ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված գործողություններից և 10-րդ հոդվածով նախատեսված համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցվող ծառայություններից օգտվող անձն է, այնինչ, Նախագծում կիրառվող հասկացություններն այլ են, մասնավորապես՝ Նախագծում կիրառվում է «դիմումատու» եզրույթը, իսկ թույլտվությունը ստանալուց հետո վերջինս Նախագծի իմաստով հանդիսանալու է թույլտվություն ստացած անձ: Հիշյալ առաջարկը բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>
--	---	--

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ